

ԽՈՒՆԿ ԵԻ ԱՂՋԹՑ ՄԵՐ ՆԱՇԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Ներսէն Աբդ. Ալոյեան

Սպիվ 24-ը Յիշատակի օրն է Հայոց Մեծ Եղեռնի Զոհերու Ակտուած 1895-ին: Պետական մակարդակով ծրագրուած էր ամբողջ ազգի բնաշնչուած: Բանակ զօրակոչեցին բոլոր 15-45 տարեկան հայ տղամարդիկը, այս զինաքարտեցն զամոնք եւ 50-100 հոգինոց խոսքերով բնաշնչեցին: Բնագրաւուեցան հայերու սակաւաթի գէնքն ու զինամթերքը:

1915-ի Ապրիլ 24-ին Կոստանդնուպոլսոց մէջ ձերբակարուեցան 235 հայ մոտարքականներ: Ապրիլ 29-ին կայանուած հայ բաղարական, եկեղեցական ու մշակութային գործիչներու թիվ 800-ը անցաւ: Անոնք Ենթարկուեցան տանջանքներու եւ ի վերջո սպաննուեցան դաժանորդէն: Տանջանահ սպաննուածներու մէջ էին Սիամանթօն, Գրիգոր Զօհրապը, Դանիկ Վարուժանը, Ռուբէն Սեւակը, Ռուբէն Զարդարեանը եւ զատ որիշներ: Զապաննուեցան միայն մեծ երգահան Կոմիտաս Վարդապէտ, որ սպան արսորի ժամանակ ականատես ըլլալով Հայ ազգի նկատմամբ կատարուած անպատմելի ու աննախնիքաց բռնութիններուն, ջարդերուն ու կոտորածներուն՝ ի վերջոյ խելազարեցաւ եւ ինչկա հոգեբուժարան: Հայ այրերու եւ մոտարքականութեան բնաշնչուածն եռու սկսա անպաշտան մնացած հայ բնակչութեան կոտորածը: Հայերը կա'մ կը ստիպէին ուրանալ քիստոնէութիւնը կամ սպաննուիլ դաժանորդէն: «Տեղահանութիւն» անուան տակ կը կազմնակերպուէին զարհութելի բռնագաղթեր դէպի Միջագետքի մահասարսու անսպասներու, մեծ մասամբ դէպի Տէր Զօր, եւ հոն ալ անխնայ կը կոտորուէին:

1915-1916 թուականներուն նահատակ-իւցաւ մէկուկես միջին հայ: Թալանուեցաւ ու քանդուեցաւ 2350 եկեղեցի ու վանք: Հիմնայատակ կործաննուեցան 1500 դպրոց ու վարժարան: Հայութեան հասցուեցաւ 14.5 միլիարդ ֆրանքի նիթական վնաս: Մահմետականացուեցան 200.000 հայեր, որոնք կ'ապրէին Հայաստանի հիմասիր՝ ճորժու գետի հովիտը: Գաղթական դարձաւ եւ աշխարհով մէկ սփռուեցաւ անի քան մէկ միջին հայ: Դեռ աւելին՝ 1918-ին Երիտրութերու Անդրկովկաս կատարած արշաւանքի ատեն կոտորուեցաւ եա 500.000 հայ:

1920-1922 թուականներուն քեմալական կառավարութեան կատարած յարձակումներու, «ազգայնական շարժում» անուան տակ կատարուած կոիններու ատեն սպաննուեցաւ 260.000 հայ:

Այսպիսով՝ 1895-1922 թթ. փաստորէն զոհուեցան 2,5 միլիոն հայութիւն:

Այս կոտորածները կը բնորոշուին որպէս ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ, որ կազմակերպուած էր ՀԱՅՈՒ եւ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ դէմ: Պետական մակարդակով ծրագրուած էր բնաշնչել ՀԱՅԸ աշխարհի երեսէն: Ուրկէ՝ այդքան ատելութիւն Հայու նման ազնի, աշխատասիր ու անմեղ ազգի նկատմամբ: Խնչո՞ւ մինչև օրս Թուրքիա չընդունիր իր մօտակայ նախնիներու կատարած անասնական արարքները: Կուրանայ Թուրքիան եւ անոր օրինակին հետեւելով իրենց աշերն ակնյայու իրականութեան եւ փաստերու վրայ կը գոցեն նաեւ աշխարհի շատ երկիրներ՝ անոնց մէջ ըլլալով մեծ ու ազդեցիկ պետութիւններ: Մինչեւ Ե՞րք...: Մի՞թ չեն հասկար թէ ՀԱՅ-ը լուցնելը անհնար է...

1915 թուական, Ապրիլ 24: Այս թուականը սեւ, արինոտ տառերով գրուեցաւ հայոց պատմութեան տարեգրութեան մէջ: Օսմանեան կայսրութիւնը իրականացուց իշխանութիւններու կողմէ նախառած ծրագրուած դարու մէծազյն ուրագրութիւնը, որոն վախճանական նպատակն էր ազատուի հայ ժողովրդին:

Սպական չլցուան լուցնել Հայը: Ան կ'ապրի, կը յիշէ ու կը պահանջէ:

Բոլոր աշխարհամասերու մէջ բնակող հայորդիներ ամէն տարի Ապրիլ 24-ին իրենց յարգանքի տուրքը կը մատուցեն եկեղենի զոհ գացած իրենց հայրենակիցներուն անմար յիշատակին եւ յետ այսու պիտի ինդրեն նաեւ անոնց բարեխօսութիւնը, որպէս սրբադատուած նահատակներ:

Հայու արինն իր երակներուն մէջ կրող ամէն մէկ հայ պէտք է միշտ յիշէ, որ՝ Մենք հայ ենք,

Մեր հայրենիքը Հայաստանն է,

Մեր լեզուն հայերէնն է,

Մեր եկեղեցին առաքելականն է

Մեր տէրն Աստուածն է՝ Հայը, Որդի եւ Սուրբ Հոգի:

Հայոց Մեծ Եղեռնի զոհերու յիշատակը միշտ պիտի խնկարկով այսօրուայ եւ վաղուայ հայու երախտագէտ հոգուն մէջ:

